

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
36

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
36

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

36

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան
Լինտ, Արմեն Մովսիսյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 36, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2023, 304 էջ:*

**Ազատ արվեստները և գիտությունները հին և
միջնադարյան Հայաստանում**

***Les Arts Libéraux et les Sciences dans l'Arménie Ancienne et Médiévale,*
sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022**

2022 թ. Փարիզում հրատարակվող հեղինակավոր *Textes et Traditions* («Բնագրեր և ավանդույթներ») շարքը լույս է ընծայել «Ազատ արվեստները և գիտությունները հին և միջնադարյան Հայաստանում» խորագրով ժողովածուն՝ ժնևի համալսարանի պրոֆեսոր, Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (AIEA / ՀՈԻՄԸ) նախագահ Վալենտինա Կալցոլարիի խմբագրությամբ: Տասը գլխից բաղկացած ժողովածուի առանձին մասերը հեղինակել են Վալենտինա Կալցոլարին, Ալեսսանդրո Օրենզոն (Պիզայի համալսարան), Գոհար Մուրադյանը (Մատենադարան), Ժան Պիեր Մահեն (Ֆրանսիայի Ակադեմիայի անդամ), Ֆեդերիկո Ալպին (Կրոնական ուսումնասիրությունների կենտրոն, Բոլոնիա), Սերջիո Լա Պորտան (Կալիֆորնիայի համալսարան), Ռոբերտ Թոմսոնը (Օքսֆորդի համալսարան, † 2018 թ.) և Ստելլա Վարդանյանը (Մատենադարան):

Ժողովածուն սկսվում է Վալենտինա Կալցոլարիի ընդարձակ հոդվածով՝ «Հունարան դպրոցի հայերեն թարգմանությունները և Նոյակ արվեստների ներմուծումը Հայաստան» (« Les Traductions arméniennes de l' École Hellénisante et l' introduction des arts du trivium en Arménie », էջ 19-52): Համառոտ անդրադարձ է արվում նախաքրիստոնեական և նախագրական շրջանում հունական քաղաքակրթության հետ Հայաստանի ունեցած պատմական և մշակութային կապերին (հույն պատմիչների վկայությունները հայերի մասին, Արմավիրում գտնված հունարեն արձանագրությունները, Հայոց գրերի գյուտից առաջ հունարենի կիրառությունը, Աթենքի, Անտիոքի փիլիսոփական դպրոցներում հայ

* Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ավագ գիտաշխատող, armine.melkonyan@yahoo.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ դեկտեմբերի 20, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ դեկտեմբերի 24, 2023:

ուսանողների ներկայությունը և այլն): Հեղինակը ներկայացնում է հունաբան դպրոցի գործունեության շնորհիվ հունարենից հայերեն թարգմանված քերականական, ճարտասանական, փիլիսոփայական, ինչպես նաև՝ աստվածաբանական երկերը, անդրադառնում հունաբան դպրոցի կենտրոններին (Բագրևանդ, Տարոն, Սյունիք, Եդեսիա, Կ. Պոլիս), ժամանակափուլերին, թարգմանության եղանակին և լեզվական առանձնահատկություններին՝ ընդգծելով հայերեն թարգմանությունների դերը հունարեն բնագրերի ուսումնասիրման համար:

Հաջորդ երեք գլուխները նվիրված են եռյակ գիտություններից (Trivium) յուրաքանչյուրի՝ քերականության, ճարտասանության և տրամաբանության (ընդհանուր առմամբ՝ փիլիսոփայության) Հայաստանում տարածմանը:

«Քերականական տեսությունների պատմությունը Հայաստանում ուշ անտիկ շրջանում և միջնադարում» (« Histoire des théories grammaticales en Arménie dans l'Antiquité tardive et au Moyen Age », էջ 53-83) գլուխը հեղինակել է Ալեասանդրո Օրենգոն: Շեշտելով Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» թարգմանության շրջադարձային դերը հայերենի քերականության պատմության մեջ՝ հեղինակը նախևառաջ անդրադառնում է նախադիոնիսյան շրջանի հայերենի քերականական եզրաբանական համակարգին՝ բերելով օրինակներ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց», Կորյունի «Վարք Մաշտոցի» երկերից և Ղազար Փարպեցու «Պատմությունից»: Այնուհետև մասնավոր օրինակների վերլուծությամբ ներկայացնում է Թրակացու երկի հայերեն թարգմանության առանձնահատկությունները, գործածված քերականական եզրաբանությունը: Հոգվածում առանձին քննության են արժանացել Դիոնիսիոս Թրակացու նշյալ երկի հայերեն առաջին մեկնիչները (Դավիթ Փիլիսոփա, Անանուն, Մովսես Քերթոզ, Ստեփանոս Սյունեցի և Համամ), ինչպես նաև՝ ավելի ուշ քերականական մեկնությունները (Եսայի Նչեցի, Հովհաննես Երզնկացի, Առաքել Սյունեցի, Դավիթ Զեյթունցի): Վերջին մասում Օրենգոն արծարծում է հայկական միջավայրում լատիներենի (Հովհաննես XXII պապի՝ 1318 թ. գրությունը Օշին թագավորին), ինչպես նաև՝ Արևմուտքում հայերենի ուսուցման (օրինակ՝ Ներսես Պալենցի գործունեությունը Ավինյոնում 1340-1345 թթ.) հարցը, անդրադառնում ունիթոուների գործունեությանը, հատկապես՝ Բարդուղիմեոս Մարաղացուն և Հովհաննես Քոնեցուն, վերջինիս հեղինակած «Համառօտ հաւաքումն յաղագս քերականի» երկին:

Եռյակ գիտություններից երկրորդին՝ ճարտասանությանն է նվիրված Գոհար Մուրադյանի հեղինակած «Ճարտասանություն. «Պիտոյից գիրքը» հայ հին և միջնադարյան ավանդույթում» (« La Rhétorique: Le Livre des Chries dans la

tradition Arménienne ancienne et Médiévale », էջ 85-100) խորագրով հոդվածը: Ճարտասանական արվեստի զարգացումը միջնադարյան Հայաստանում նշանավորվեց Ափթոնիոս Անտիոքացու (Գ դ. 2-րդ կես – Ե դարասկիզբ) ճարտասանական վարժուխոնների («Նախակրթությունների») դասագրքի հիման վրա ստեղծված «Պիտոյից գրքով»: Տասը վարժուխոնների տեսական հրահանգները թարգմանված են Ափթոնիոսի նշյալ երկից, իսկ բերված օրինակներն ինքնուրույն շարադրանքի արդյունք են: Հեղինակը նախևառաջ անդրադառնում է Ափթոնիոսի «Նախակրթություններին», այնուհետև հայերեն թարգմանությունը համեմատելով հունարեն նախօրինակի հետ, առանձին օրինակների վերլուծությամբ ներկայացնում հայերենի առանձնահատկությունները: Արձարծելով «Պիտոյից գրքի» հեղինակային պատկանելության (հայ մատենագրության մեջ այն վերագրվել է Մովսես Խորենացուն, Դավիթ Անհաղթին) և թվագրման հարցը՝ Գ. Մուրադյանը կարծում է, որ այն ստեղծվել է Փիլոն Ալեքսանդրացու երկերի թարգմանությունից ոչ շատ ուշ՝ Ե դարի երկրորդ կեսին: Հոդվածի վերջին մասում ներկայացվում է «Պիտոյից գրքի» ազդեցությունը ավելի ուշ շրջանի հեղինակների վրա, ինչպես օրինակ՝ Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» եւ «Յաղագս երկնի եւ զարդուց նորա» երկերում. առաջին դեպքում Եղեսիան կերպարավորում է մի որդեկորույս կնոջ, իսկ երկրորդ դեպքում երկինքը խոսում է առաջին դեմքով: Այս օրինակներում կիրարկված է «Պիտոյից գրքում» սահմանված «բարառնություն» ենթատեսակ՝ «դիմառնությունը», քանի որ անշունչ առարկաներն օժտվում են խոսելու ունակությամբ: Նույն դիմառնության կանոնը կիրառված է Ստեփանոս Օրբելյանի՝ Սուրբ Էջմիածնի տաճարին նվիրված եղերերգում, որտեղ տաճարին անձնավորող թագուհին ողբում է իր թշվառ վիճակը, պատմում իր փառավոր անցյալը, պատուհասած աղետները, սակայն վերջում խոստանում է չվհատվել՝ հույսը դնելով Տիրոջ վրա: Հեղինակը մատնանշում է նաև «Պիտոյից գրքի» ազդեցության այլ օրինակներ Առաքել Սյունեցու «Աղամգրքում», Կեղծ-Կալիսթենեսի «Ալեքսանդրի Պատմության» հայերեն թարգմանության մեջ Խաչատուր Կեչառեցու ավելացրած շորս «բարառնութիւն»-ներում և այլն:

Եռյակ գիտություններին նվիրված հատվածը եզրափակում է Վալենտինա Կալցոլարիի՝ «Փիլիսոփայական մտահայեցության վերելքը Հայաստանում ուղանալի շրջանում» («L'essor de la Spéculation philosophique en Arménie dans l'antiquité tardive », էջ 101-126) խորագրով հոդվածը: Փիլիսոփայական մտքի վերելքը Հայաստանում մեծապես կապված է հունաբան դպրոցի գործունեության հետ. հունարենից հայերեն թարգմանված Արիստոտելի, Պորփյուրի և Դավթի փիլիսոփայական երկերը, որոնք ուսուցանվում էին միջնադարյան հայ

վարդապետարաններում և համալսարաններում, կարևորագույն հիմք հանդիսացան հայ ինքնուրույն փիլիսոփայական մտքի զարգացման համար: Հեղինակը նախևառաջ քննարկում է այն հարցը, թե որոնք էին հունարեն փիլիսոփայական երկերի՝ հայկական միջավայրում տարածմանը նպաստող ուղիները և թե ինչ չափանիշներով էին ընտրվում թարգմանվելիք երկերը: Առհասարակ հունական փիլիսոփայական երկերի փոխանցումը դիտարկվում է նորպլատոնական կրթական ծրագրերի շրջանակում, այսինքն՝ տարածվել են հատկապես այն երկերը, որոնք ուսուցանվել են նորպլատոնական դպրոցներում (հայերեն թարգմանվել են հատկապես Ալեքսանդրյան դպրոցի փիլիսոփայական երկերը): Հայտնի է, որ նորպլատոնական դպրոցների ծրագիրը կազմված էր երկու հիմնական դասընթացներից՝ արիստոտելյան և պլատոնական. ընդ որում, առաջինն ընկալվում էր որպես նախնական անհրաժեշտ ներածություն՝ երկրորդը հասկանալու համար: Այսպիսով, հոգվածում ներկայացված են Ալեքսանդրյան նորպլատոնական ժառանգության փոխանցումը և տարածումը Հայաստանում, Արիստոտելի երկերի և դրանց մեկնությունների հայերեն թարգմանությունները, Պլատոնի երկերի թարգմանության ժամանակի հարցը (վերջինն ըստ հեղինակի ավելի մանրամասն ուսումնասիրման կարիք ունի): Ուշագրավ է, որ Ալեքսանդրյան նորպլատոնական դպրոցի ներկայացուցիչներից միայն Դավթի երկերն են թարգմանվել հայերեն, որի անձի և գրական ժառանգության կնճռոտ խնդիրն արժանացել է առանձնակի ուշադրության: Վերջին մասում հեղինակն անդրադառնում է Ալեքսանդրյան նորպլատոնական ժառանգությանը հայկական միջնադարում և նոր շրջանում՝ մատնանշելով, որ Դավթի, Արիստոտելի և Պորփյուրի երկերն ընդգրկված են եղել հայ միջնադարյան վարդապետարանների ծրագրում, իսկ հայ մատենագիրները շարունակել են մեկնություններ գրել (ինչպես օրինակ՝ Վահրամ Բաբունին, Գրիգոր Տաթևացին և Առաքել Սյունեցին): Առաքել Դավրիժեցու վկայությամբ՝ դեռևս ժէ դարում Դավթի «Սահմանք»-ը, Արիստոտելի «Ստորոգություններ», «Վերլուծություն» և «Մեկնության մասին» երկերը, ինչպես նաև՝ Պորփյուրի «Ներածությունը» պարտադիր են եղել փիլիսոփայություն ուսանելու համար, օրինակ՝ Ամրդոլու վանքում, ինչպես նաև՝ Տաթևի Մեծ Անապատի, Կիմ անապատի, Էջմիածնի և Նոր Զուղայի վանքերում:

Գրքում Քառյակ գիտությունների (Quadrivium) թվաբանությանը, երկրաչափությանը, երաժշտությանը, աստղագիտությանը նվիրված բաժինը ներկայացված է այլ մոտեցմամբ: Սկզբում մի առանձին գլուխ՝ «Անանիա Շիրակացին և ազատ արվեստների հայերեն թարգմանությունը (է դար)» (« Anania Širakac'i et la Traduction Arménienne des Arts Libéraux (VIIe siècle) », էջ 143-

159), նվիրվել է Անանիա Շիրակացուն, որի շնորհիվ մաթեմատիկական գիտությունները հաստատվեցին Հայաստանում: Հեղինակ Ժան-Պիեռ Մահեն նախևառաջ անդրադառնում է Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսի (461-478) Աղվանքի Վաչե թագավորին ուղղված թղթին, որտեղ նամակագիրը կարևորում է թվաբանության, երկրաչափության, աստղաբաշխության (աստղաբանության) և բժշկության ուսումնասիրությունը Սուրբ Գիրքը սերտելուց առաջ: Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գյուտը սերում էր Տայքից, հեղինակը շեշտում է, որ նա հմուտ էր նաև հունարենի մեջ (Ղազար Փարպեցու վկայությամբ՝ «լի գիտութեամբ հայովս և առաւելեալ յունիւն»), ուստի՝ կարող էր ծանոթ լինել նաև այնպիսի աղբյուրների, որոնք դեռևս չէին թարգմանվել հայերեն: Այս պահասը հավանաբար եղել է 630-ական թվականներին, երբ Անանիա Շիրակացին սկսեց իր ուսումնառությունը, և, ինչպես հաղորդում է իր ինքնակենսագրականում՝ Հայոց աշխարհում չկար մեկը, որ իմանար փիլիսոփայություն և չկային գիտական գրքեր (ըստ հոգվածագրի՝ այս վկայությունը վերաբերում է առավելագույն Պարսկահայքին): Այսպես, հոգվածում ներկայացվում են Անանիա Շիրակացու կյանքը, հույն իմաստասեր Տյուքիկոսի ուսուցչապետությամբ Տրապիզոնում ուսումնառությունը, նրա անունով հայտնի ստեղծագործությունները: Առավել մանրամասնորեն վերլուծվում է «Քննիկոն»-ը, որի՝ Անիի կաթողիկոսարանում պահվող եզակի օրինակի մասին վկայում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունին՝ խնդրելով Պետրոս Գետադարձ Կաթողիկոսին իրեն ուղարկել մի նոր ընդօրինակություն:

Ժողովածուի հաջորդ երկու գլուխները, փոխլրացնելով միմյանց, ներկայացնում են Եռյակ և Քառյակ գիտությունների ուսուցումը միջնադարյան Հայաստանի վարդապետարաններում՝ համապատասխանաբար՝ Ժ-ԺԱ և ԺԳ-ԺԴ դարերում:

Ֆեդերիկո Ալպիի հեղինակած հոգվածը՝ «Անիի, Սանահինի և Նարեկի դպրոցները (Ժ-ԺԱ դդ.)» (« Les écoles d’Ani, Sanahin et Narek (X^e-XI^e siècle) », էջ 161-192), սկսվում է Ժ դարում Հայաստանում տիրող իրավիճակի մասին պատմական ակնարկով: Հեղինակը մանրամասնորեն կանգ է առնում ժամանակի նշանավոր գործիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կյանքի, գործունեության և մատենագրական ժառանգության վրա՝ արժևորելով նրա հաղորդած տեղեկությունները Հայաստանի վարդապետարանների գործունեության ուսումնասիրման համար: Մասնավորապես իր 11-րդ թղթում Մագիստրոսը հաստատում է, որ Պորփյուրի «Ներածությունը» սովորել է, երբ դեռ պատանի է եղել, քաջածանոթ է Արիստոտելի «Կատեգորիաներին», սակայն Արիստոտելից և Պորփյուրից առաջ նա ընթերցել է Դավթի «Սահմանք»-ը, որին հաճախա-

կի հղում է իր թղթերում: Մագիստրոսի թղթերից պարզ է դառնում, որ նա տեղյակ է եղել մաթեմատիկային, երկրաչափությանը և երաժշտությանը: Հաշվի առնելով, որ Մագիստրոսն իր կրթության հիմնական մասն ստացել է Անիում՝ հեղինակը ենթադրում է, որ Մեծ Հայքում կար ամբողջական կրթություն մատուցելու բավարար համակարգ (շեշտվում է հատկապես կաթողիկոսական գրադարանում պահվող Անանիա Շիրակացու «Քննիկոն»-ը, որը խիստ կարևոր էր Քառյակ գիտությունների սերտողության համար): Սանահինի դպրոցը ներկայացվում է Հաղբատի հետ միասին՝ մատենագրական տարբեր աղբյուրների հիման վրա անդրադառնալով դպրոցն առաջնորդած նշանավոր վարդապետներին (գիտնական այր Հովհաննես, մեծ հոգևոր Գիոսկորոս, Հակոբ Սանահնեցի կամ Քարափնեցի): «Քառյակ գիտությունները դպրոցներում ժ-ԺԱ դդ.» ենթաբաժնում քննվում են հիմնականում Անանիա Նարեկացու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի և Հովհաննես Սարկավագի աշխատություններում առկա այն տարրերը, որոնց հիման վրա կարելի է ասել, որ նրանք քաջածանոթ են եղել թվաբանությանը և երաժշտությանը: «Հունարեն լեզուն ժ-ԺԱ դարերի հայկական դպրոցներում» ենթաբաժնում խոսվում է Գրիգոր Մագիստրոսի, ինչպես նաև Խոսրով Անձևացու հունարեն լեզվի իմացության մասին: Քննվող ժամանակաշրջանում Հայաստանի թե՛ հարավում և թե՛ հյուսիսում քառյակ գիտությունների, ինչպես նաև հունարենի մեջ հմուտ գործիչների ներկայության փաստից ելնելով՝ հեղինակը կարևորում է այդ շրջանի կրթության վրա հունականության ազդեցության առավել խորը ուսումնասիրությունը:

«Յոթ ազատ արվեստները և Գլաձորի-Տաթևի դպրոցը (ԺԳ-ԺԳ դդ.)»
 (« Les Sept arts Libéraux et l'école de Glajor-Tat'ew (XIII^e-XIV^e siècle) », էջ 193-214) խորագրով գլուխը հեղինակել է Սերջիո Լա Պորտան: Վկայակոչելով Գրիգոր Տաթևացու՝ Վանական վարդապետի Հոբի գրքի մեկնության Լուծմունքի 1408 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանը, հոդվածագիրն ընդգծում է, որ Գլաձոր-Տաթևի դպրոցի մտավոր ավանդույթը սերում է նոր Գետիկի վանքի հիմնադիր Մխիթար Գոշից՝ փոխանցվելով վարդապետից աշակերտին (Հովհաննես Վանական վարդապետ Տավուշեցի, Վարդան Արևելցի, Ներսես Մշեցի, Եսայի Նշեցի, Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի): Համառոտակի ներկայացվում է Ներսես Մշեցու, Եսայի Նշեցու, Տիրատուր Կիլիկեցու, Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու գործունեությունը: Գլաձոր-Տաթևի դպրոցի և դրա ծրագրի քննարկումը հեղինակն սկսում է «վարդապետ», «վարժապետ», «րաբունի» և «րաբունապետ» տիտղոսների վերլուծությամբ: Գլաձորում և Տաթևում ստեղծված ձեռագրերի, դրանց հիշատակարանների և մատենագրա-

կան այլ սկզբնաղբյուրների հիման վրա քննվում են ուսուցանվող առարկաների, ուսուցման եղանակների, աշակերտների թվի և աշխարհագրության վերաբերյալ տեղեկությունները: Մատնանշվում են Գլաձորում և Տաթևում ընդօրինակված մի շարք ձեռագրեր, որոնք կիրառվել են կրթական նպատակներով (ինչպես օրինակ՝ Գլաձորում 1317 թ. ընդօրինակված ՄՄ 6897 կամ ԺԴ դարում Տաթևում ընդօրինակված ՄՄ 3902 գրչագրերը): Համեմատելով դրանցում ընդգրկված բնագրերը՝ Լա Պորտան եզրակացնում է, որ քերականական և տրամաբանական նյութերն ամենաշատն են ընդօրինակվել, քանի որ դրանք ամենաանհրաժեշտն են եղել աստվածաբանական վեճերի և Սուրբ Գրքի մեկնաբանության համար: Մինչդեռ քառյակ գիտություններին վերաբերող բնագրերն ավելի քիչ են հանդիպում: Կրկին ձեռագրերի հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ Եռյակ և Քառյակ գիտություններից բացի ուսանել են եկեղեցու հայրերի՝ Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացու և այլոց գործերը, ինչպես նաև հայ հեղինակներից՝ Եզնիկի, Եղիշեի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Վարդան Արևելցու և Գևորգ Սկևռացու երկերը: Հատուկ հետաքրքրություն է եղել մեկնությունների նկատմամբ: Համալսարանի ընթացակետեր Եսայի Նչեցին, Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին իրենց հերթին ստեղծել են ուսուցման կազմակերպման համար հիմնարար աշխատություններ: Հեղինակը եզրակացնում է, որ Յոթ ազատ արվեստները, առավելապես՝ Եռյակ գիտությունները կարևորագույն դեր են ունեցել Գլաձոր-Տաթևի դպրոցի կրթական համակարգում, մինչդեռ, ավելի քիչ տեղ է տրվել քառյակ գիտություններին, թեև ուսանողները ծանոթացել են աստղաբանական տեսություններին, ուսանել են նաև թվաբանություն և երկրաչափություն:

Ժողովածուի այս բաժնում մաթեմատիկական գիտությունների շարքում ներկայացված են նաև հայ միջնադարյան տիեզերաբանությունը, աստղաբանությունը, աստղագիտությունը և տոմարը: Ռոբերտ Թոմսոնը «Տիեզերագիտությունը հին և միջնադարյան Հայաստանում» («La Cosmologie dans l'Arménie Ancienne et Médiévale», էջ 215-236) խորագրով հոդվածն սկսում է Հայոց գրերի գյուտից հետո սկիզբ առած թարգմանական շարժման արժևորմամբ: Հեղինակն ընդգծում է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ը որպես առաջին ինքնուրույն երկ, որում քննարկվում են տիեզերաբանական հարցեր՝ զարմանքով նկատելով, որ այն մեծ ազդեցություն չի ունեցել հետագա դարերի հայ մատենագիրների վրա: Աշխարհը կազմող չորս (հող, օդ, հուր և ջուր) տարրերի տեսությունը առկա է նաև Եղիշեի պատմական երկում, ինչպես նաև՝ Գրիգոր Լուսավորչին վերագրվող «Հաճախապատում ճառերում»: Հեղինակն առանձ-

նակի ուշադրության է արժանացնում Անանիա Շիրակացու տիեզերաբանական ուսմունքը, քննարկում նրա «Տիեզերագիտությունը» և օգտագործած աղբյուրների հարցը: Թոմսոնի դիտարկմամբ՝ Եսայի մարգարեի «կանգնեաց զերկինս իբրև զկամար» (Ես. Խ 22) նկարագրությունը, որ հանդիպում է նաև Գրիգորի Վարդապետության մեջ (բայց ոչ Եզնիկի «Եղծ աղանդոց»-ում), զարգացնում է Ներսես Շնորհալին իր «Յաղագս երկնի եւ զարդուց նորա» երկում: Իսկ Ներսես Լամբրոնացին իր Առակաց գրքի մեկնության մեջ խոսում է հինգերորդ տարրի՝ եթերի մասին՝ հղելով հույն փիլիսոփաներին: Հայ միջնադարյան տիեզերաբանական տեսության ձևավորման առումով կարևորվում են հունարենից թարգմանված Բարսեղ Կեսարացու, ինչպես նաև՝ Գեորգիոս Պիսիդեսի վեցօրյա արարչության («Վեցօրեից») մեկնությունները: Քննարկվում են հայ ինքնուրույն մատենագրության մեջ Ծննդոց գրքի՝ Եղիշեի, Տիմոթեոս վարդապետի, Վարդան Արևելցու մեկնությունները, Հովհաննես Երզնկացի Պլուզի «Յաղագս երկնային շարժմանն» ստեղծագործությունը:

«Աստղաբանություն, աստղագիտություն և տոմար» (« Astronomie, Astrologie et Calendriers », էջ 237-263) գլխի առաջին մասում (Astronomie) Ալեքսանդրո Օրենզոն քննում է հատկապես Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի և Անանիա Շիրակացու «Տիեզերագիտության» մեջ արտացոլված աստղաբանական տեսությունները: Եզնիկ Կողբացին աստղաբանական հարցերին անդրադառնում է հույն փիլիսոփաների տեսությունների քննադատությանը նվիրված հատվածում՝ նպատակ ունենալով հերքել «ոչ քրիստոնյա» հեղինակների մոտեցումները: Մինչդեռ այդ տեսություններից շատերն ընդունելի են եղել Անանիա Շիրակացու համար: Աստղագիտության (աստղագուշակության) վերաբերյալ տեսությունները, ճակատագրապաշտական հավատալիքները քննարկվում են Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի, Հովհան Մանդակունու 25-րդ ճառի («Թուղթ վասն հմայից դիվականաց եւ անօրէն յուռթողաց») և Շիրակացու «Տիեզերագիտության», ինչպես նաև՝ վերջինիս «Յաղագս կենդանատեսակաց»-ի վկայակոչմամբ, որոնցում խստորեն քննադատվում են տարածված ճակատագրապաշտական տեսությունները և գուշակությունները: Խոսվում է Հակոբ Մեղապարտի հրատարակած «Ուրբաթագրքի», «Պարզատուժարի», ինչպես նաև՝ հայկական Ախտարքների մասին: Երրորդ՝ բաժնում (Տոմար) հեղինակն անդրադառնում է Հայկյան թվականի վերաբերյալ մատենագրական տեղեկություններին (Անանիա Շիրակացի, Մովսես Խորենացի, Գրիգոր Տաթևացի) և Հայոց մեծ թվականին, Հովհաննես Սարկավազ Իմաստասերին, ներկայացնում հայկական ամսանունները, օրանունները և շաբաթանունները և դրանցից մի քանիսի ստուգաբանությունը:

ժողովածուն եզրափակվում է Ստեյլա Վարդանյանի՝ «Բժշկությունը միջնադարյան Հայաստանում» (« La Médecine dans l'Arménie Médiévale », էջ 266-286) հոդվածով, որում ներկայացվում են հայ բժշկության պատմության կարևորագույն դրվագները և գործիչները: Ը դարասկզբին Ստեփանոս Սյունեցին և Դավիթ Հյուսպատոսը հունարենից հայերեն թարգմանեցին Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» և Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» երկերը, որոնք մեծ ազդեցություն ունեցան հայ մարդաբանական մտքի վրա: Հեղինակը փոքր ենթաբաժիններով անդրադառնում է Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, Գրիգոր Տաթևացու երկերում բժշկագիտական-մարդաբանական հարցերի արծարծմանը: Առավել մանրամասն է ներկայացնում «Գագիկ-Հեթումյան» անվամբ հայտնի բժշկարանը, որն այդպես է կոչվել նախ Անիում Գագիկ Առաջինի օրոք (990-1020) ստեղծված լինելու, ապա ԺԲ-ԺԳ դդ. Կիրիկիայում Հեթում Լամբրոնացու և Հեթում Պատմիչի ձեռքով խմբագրված լինելու պատճառով: Առանձին-առանձին ներկայացված են ԺԲ-ԺԳ դդ. Կիրիկյան Հայաստանում գործած բժշկապետեր Մխիթար Հերացին և նրա «Ջերմանց մխիթարութիւն» երկը, «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց»-ի հեղինակ Գրիգորիսը, ինչպես նաև՝ ծագումով ասորի բժիշկներ Աբուսայիդը, Իշոխը, Ժն դարում ապրած Ամիրդովլաթ Ամասիացին (որն եղել է Մեհմեդ Երկրորդ սուլթանի անձնական բժիշկը) և նրա թողած մատենագրական հարուստ ժառանգությունը: Հետագա դարերում Ամիրդովլաթի ստեղծած ավանդույթը շարունակվել և զարգացել է Սեբաստիայի, Թոխաթի (Եվդոկիա) և Նոր Զուղայի բժշկական կենտրոններում:

Խնդրո առարկա ժողովածուում ընդգրկված յուրաքանչյուր հոդվածի վերջում առկա է օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ, իսկ ընդհանուր ժողովածուն ունի հետևյալ ցանկերը՝ 1. Վկայակոչված տեղիների (*index locorum*) բաժանված ըստ հայ, հույն, լատին և ասորի հեղինակների երկերի, 2. Սուրբգրային հղումների, 3. Ձեռագրերի և պապիրուսների, 4. Անձնանունների 5. Ընդհանուր ցանկ, որի մեջ ներառված են նաև տեղանունները:

Այսպիսով, տասը գլխից բաղկացած խիստ հետաքրքրական այս հատորը ներկայացնում է Հին և Միջնադարյան Հայաստանում Եռյակ և Քառյակ գիտությունների ներթափանցման, ուսուցման և տարածման ամբողջական մի պատկեր: Այն կարող է օգտակար լինել թե՛ արծարծված հարցերն ուսումնասիրող նեղ մասնագետների և թե՛ հարակից թեմաներով զբաղվող հետազոտողների համար: Քննարկվող թեմաները կարևոր են այս կամ այն խնդրի վերաբերյալ առավել համակողմանի պատկերացում կազմելու, միաժամանակ ուսումնասիր-

ման կարոտ հարցերը նկատելու (հաճախ հողավաճագիրներն ուղղակիորեն մատնանշում են դրանք) և հետագայում ավելի խորությամբ հետազոտելու առումով: Ժողովածուի բոլոր հողավաճները ֆրանսերեն են, այսինքն՝ այն հույժ կարևոր է օտար գիտական համայնքին հայ միջնադարյան սկզբնաղբյուրները և մշակույթը ներկայացնելու առումով: Գիրքը հատկանշելի է նաև մեթոդական տեսանկյունից և կարող է հանդիսանալ նման թեմատիկ ժողովածուների կազմման օրինակ: Սույն համառոտ ակնարկով մենք փորձեցինք միայն ընդհանուր պատկերացում տալ գրքի կառուցվածքի և դրանում ընդգրկված հողավաճների մասին՝ նպատակ ունենալով արժևորել նման ձեռնարկները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլաձորի համալսարանի ուսուցիչները և սաները..... 5

ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ

Դավիթ-Դանիելյան պալաթարը և Լազարյանները..... 34

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԹԵՐԶՅԱՆ

Գևորգ Կաղի ժամանակաշրջանի ճշգրտման փորձ..... 54

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԻՆԵ ՄՈՍԻԿՅԱՆ

«Խառնվածք» հասկացություն միջնադարյան ընկալումները..... 61

«ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ՝ ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ (2023 թ. հունիսի 21-23)

ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

Հայոց եկեղեցու անդամագրությունն ըստ
«Արևորդիների դարձի մասին» Ս. Ներսես Շնորհալու թղթի..... 83

ԷՌԵԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

Ներսես Դ Կլայեցի կաթողիկոսի «Շնորհալի»
պատվանվան մասին..... 97

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ներսես Շնորհալին խրատական բանաստեղծության հիմնադիր..... 116

ԼԱԼԻԿ ԽԱԶՍՏՐՅԱՆ

Պատկերավոր համեմատությունների ձևակազմական
կաղապարները Ներսես Շնորհալու «Ողբ եղեսիոյ» պոեմում..... 127

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Ներսես Շնորհալի և Կոմիտաս վարդապետ..... 139

ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Հայկական վերածննդի երաժշտաբանաստեղծական արվեստի որոշ
բնութագրիչներ՝ Ս. Ներսես Շնորհալու ժառանգության մեջ..... 156

ՀԱՍՄԻԿ ԻՐԻՑՅԱՆ

Ներսես Շնորհալու նորահայտ բնագիրը ՄՄ 3839 ձեռագրում (անգլ.)..... 166

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍԵՅՆԳԵՀՆԱՍԻՄ ՖԱԹԵՄԻ, ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Մատենադարանի այլալեզու ֆոնդի
չորս միավորի նկարագրություն (անգլ.)*..... 179

ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երկու հնատիպ հմայիլների ուսումնասիրության հետքերով..... 195

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԷՍԹԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Գրիգոր Լուսավորչին վերագրվող տեսիլ-հարցումը
(համեմատական բնագիր)*..... 212

ԱՐԵՎԻԿ ԱՐԱԲՅԱՆ

*Առաքել Սյունեցու «Ղազարու յարութեան» և
«Մեծատան եւ Ղազարու» անտիպ տաղերը*..... 251

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

*Զաֆարիա Ծայրագոյն վարդապետ Բաղումեան,
Կիրակոս Երզնկացու՝ Սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները,
խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, Մատենադարան, 2022*..... 260

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Les Arts Libéraux et les Sciences dans l' Arménie
Ancienne et Médiévale («Ազատ արվեստները և գիտությունները
հին և միջնադարյան Հայաստանում»), sous la direction
de Valentina Calzolari, Paris: Vrin 2022*..... 270

ԲԱՆԱՎԵՃ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Դարձյալ հին Երևանի աշտարակի և
Երկուերեսնի եկեղեցու պարզաբանման շուրջ*..... 280

*Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը
վերաբերող պահանջներ*..... 296

CONTENTS

HISTORY

KAREN MATEVOSIAN

The Teachers and Students of Gladzor University.....5

HRANT OHANYAN

The Role of the Lazaryans in the Davit-Daniel Conflict.....34

PHILOLOGY

GAYANE TERZIAN

An Attempt at Dating the Life of Gevorg Kagh.....54

NATURAL SCIENCES

KARINE MOSIKYAN

Medieval Conceptions of Temperament.....61

PROCEEDINGS OF THE 6TH INTERNATIONAL CONFERENCE “NERSĒS SHNORHALI THE GRACIOUS PATRIARCH” (June 21-23, 2023)

PROTO-ARCHIMANDRITE ZACHARIA BAGHUMYAN

Membership in the Armenian Church According to St. Nersēs
Gracious' Letter “On The Conversion of the Sons of the Sun”.....83

ERNA MANEA SHIRINIAN

About the Title “Graceful” of Catholicos
Nersēs IV Klayets'i.....97

VANO EGHIAZARYAN

Nersēs Shnorhali as the Founder of the Genre
of Didactic Poetry.....116

LALIK KHACHATRYAN

Formal Models of Figurative Comparisons
in the Poem “Elegy on the Capture of Edessa”
by Nersēs Shnorhali.....127

LUSINE SAHAKYAN

Nersēs Shnorhali And Komitas Vardapet.....139

MHER NAVOYAN

Some Characteristics of the Musical and Poetic Art
of the Armenian Renaissance in the Heritage
of St. Nerses Shnorhali 156

HASMIK IRITSYAN

A Newly Discovered Work of Nersēs Shnorhali
in Ms M3839 166

BIBLIOGRAPHY**SAYEDEHNASIM FATEMI, HAYKAZ GEVORGYAN**

Description of Four Units of Matenadaran's Foreign Language Fund 179

SATENIK GRIGORYAN

On Two 18th C. Scroll Amulets 195

PUBLICATIONS**ESTER PETROSYAN**

The Revelation Attributed to Gregory the Illuminator 212

AREVIK ARABYAN

Arak‘el Siwnets‘i and his Unpublished Verses
“The Resurrection of Lazarus” and “The Rich Man and Lazarus” 251

BOOK REVIEWS**ARUSYAK TAMRAZYAN**

Proto-Archimandrite Zacharia Baghumyan, *Kirakos Erznkais‘i’s
Commentaries on Saint Evagrius Ponticus’ Works*, Yerevan, 2022 260

ARMINE MELKONYAN

Les Arts Libéraux et les Sciences dans l’Arménie Ancienne et Médiévale,
Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022 270

DISCUSSION**ARSEN HARUTYUNYAN**

Once More on the Interpretation of Old Yerevan’s Tower
and Church Yerkueresni (St. Paul and Peter) 280

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

КАРЕН МАТЕВОСЯН

Преподаватели и учащиеся Гладзорского университета 5

ГРАНТ ОГАНЯН

Противостояние Давид-Даниэл и Лазаревы 34

ФИЛОЛОГИЯ

ГАЯНЕ ТЕРЗЯН

Опыт уточнения времени жизни Геворга Кага 54

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

КАРИНЕ МОСИКЯН

Средневековые представления о темпераменте 61

**ИЗ МАТЕРИАЛОВ 6-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ
“БЛАГОДАТНЫЙ ПАТРИАРХ НЕРСЕС ШНОРАЛИ”
(21-23 июня, 2023 г.)**

ПРОТОАРХИМАНДРИТ, ЗАХАРИЯ БАГУМЯН

Принятие в лоно армянской церкви согласно посланию Св. Нерсеса Благодатного «Об обращении Сынов Солнца» 83

ЭРНА МАНЕА ШИРИНЯН

О титуле «Шнорали» католикоса Нерсеса IV Клаеци 97

ВАНО ЕГИАЗАРЯН

Нерсес Благодатный – основоположник жанра поучительных стихотворений 116

ЛАЛИК ХАЧАТРЯН

Формальные модели образных сравнений в поэме «Элегия на взятие Эдессы» Нерсеса Шнорали 127

ЛУСИНЕ СААКЯН

Нерсес Шнорали и Комитас Архимандрит 139

МГЕР НАВОЯН

Некоторые характеристики музыкально-поэтического искусства армянского Возрождения в наследии Св. Нерсеса Шнорали.....156

АСМИК ИРИЦЯН

Новонайденный текст Нерсеса Шнорали в рукописи № 3839 из собрания Матенадарана.....166

БИБЛИОГРАФИЯ**ФАТЕМИ СЕЙЕДЕХНАСИМ, АЙКАЗ ГЕВОРГЯН**

Описание четырех единиц иноязычного фонда Матенадарана.....179

САТЕНИК ГРИГОРЯН

О двух старопечатных свитках-оберегах XVIII в.195

ПУБЛИКАЦИИ**ЭСТЕР ПЕТРОСЯН**

Откровение, приписываемое Григорию Просветителю.....212

АРЕВИК АРАБЯН

Неизданные стихи “О воскрешении Лазаря” и “О богаче и Лазаре” Аракела Сюнеци.....251

РЕЦЕНЗИИ**АРУСЯК ТАМРАЗЯН**

Протоархимандрит Захария Багумян, *Толкование Киракоса Ерзнкаци на сочинения Евагрия Понтийского*, Ереван, 2022.....260

АРМИНЕ МЕЛКОНЯН

Les Arts Libéraux et les Sciences dans l'Arménie Ancienne et Médiévale, Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022.....270

ДИСКУССИЯ**АРСЕН АРУТЮНЯН**

Вновь об интерпретации башни и церкви Еркуересни (Св. Павла и Петра) старого Еревана.....280

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 36

BULLETIN OF MATENADARAN

Volume 36

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 36

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ *Ձեռ. եղմ. 365՝ Եսայի Նչեցին Գլաձորի համալսարանի
ուսուցիչների և սաների հետ*

Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 19

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մետրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/